- հացահատիկ՝ $\frac{P_{2015} \cdot S_{2021}}{P_{2015} \cdot S_{2015}} = \frac{3717,2}{6015,0} = 0,62$ կամ 62 %,

- ցորեն՝ $\frac{P_{2015} \cdot S_{2021}}{P_{2015} \cdot S_{2015}} = \frac{1932,4}{3627,0} = 0,53$ կամ 62 %,

որտեղ P_{2015} -ը, P_{2021} -ը բերքատվության մակարդակներն են 2015 և 2021 թվականներին, S_{2015} և S_{2021} -ը՝ ցանքատարածությունները նույն ժամանակաշրջանում:

Ըստ ուսումնասիրությունների՝ հացահատիկի արտադրության անկումը սկսվել է 2017 թվականից: Մինչ այդ գրանցված աճը, թերևս, պայմանավորված է եղել այդ ժամանակաշրջանում կառավարության կողմից մի շարք ծրագրերի իրագործմամբ:

2018-2022 թթ. Հայաստանում գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն, կերային մշակաբույսերի և աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրերի կատարողականի (Տեղեկանք ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ, տրված 30.11.2022 թ.) ուսումնասիրությամբ պարզվել է, որ միայն 2021 թ. տնտեսավարողներին փոխհատուցվել է 481,0 մլն դրամ, մյուս տարիներին այդ ծրագրերից օգտվելու հայտեր չեն ներկայացվել:

Հացահատիկի արտադրության աջակցության ծրագրերի թերակատարման և արդյունավետության գնահատման նպատակով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոսների, ինչպես նաև մեր կողմից հարցումներ են անցկացվել ծրագրերի շահառուների շրջանում (Գեղարքունիքի, Շիրակի և Լոռու մարզերում): Հարցման արդյունքների համաձայն՝ շահառուների մեծ մասը կարևորում է գյուղատնտեսական և ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը, մասամբ նաև՝ գյուղտեխնիկայի և ագ-

րոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի պետական աջակցությունը: Հարցվող տնտեսավարողները կարևորում են նաև մատչելի գներով պարարտանյութերի, դիզելային վառելիքի, սերմացուի ձեռք բերման սուբսիդավորման ծրագրերը, որոնք դադարեցվել են դեռևս 2018 թ.: Սակայն 2022 թ. մարտին ՀՀ կառավարությունը, նկատի ունենալով պարարտանյութերի բարձր գնաճը (1 պարկ ամոնիակային սելիտրայի գինը կազմել է 22,0-25,0 հազ. դրամ) և փոքր ֆերմերային տնտեսությունների խոցելիությունը, որոշում ընդունեց մինչև 3 հա տարածքում մշակություն իրականացնող ֆերմերային տնտեսություններին սուբսիդավորել պարարտանյութի վաճառքի գնի 50 %-ը, բայց 50 կգ կշռող յուրաքանչյուր պարկի հաշվով 9000 դրամից ոչ ավելի: Եթե նկատի ունենանք նշված որոշման կայացման ժամանակահատվածը, ապա ակնհայտ է, որ այն չէր կարող խթանել 2022 թ. գարնանացան հացահատիկի ցանքի կազմակերպումը, ուստի կարելի է փաստել այս ծրագրի ձախողումը որոշ համայնքներում:

Որպես կանոն, աշխարհի զարգացած երկրների ագրարային քաղաքականության հիմնական նպատակը հացահատիկի արտադրության բավարար ծավալների, պարենային անվտանգության և տնտեսական անկախության ապահովումն է:

Ուշագրավ է հացահատիկի արտադրության պետական աջակցության, այդ թվում՝ սուբսիդավորման ոլորտներում միջազգային փորձը:

ԱՄՆ-ում հացահատիկի արտադրության կայուն զարգացման նպատակով կիրառվում են հետևյալ երեք ծրագրերը.

1. Վարկավորման գրավադրում և բերքի ապահովագրման ծրագիր: Գրավային գների միջոցով պետությունը երաշխավորում է հացահատիկի նվազագույն գին և իրացվելիության որոշակի մակարդակ: Ֆերմերը գյուղատնտեսական մթերքը սահմանված գներով հանձնում է Ապրանքավարկային ընկերությանը՝ ապահովելով կայուն եկամուտներ (A. Нешадин, 2009): Հացահատիկ արտադրողների նվազագույն եկամտաբերությունը երաշխավորվում է նաև բերքի ապահովագրմամբ (www.sbs-consulting.ru):

2. Երաշխավորված (նպատակային) գների ծրագիր: Սահմանվող նվազագույն գնով պետությունը գնում է չբաշխված հացահատիկը, ինչը թույլ է տալիս լուծել միաժամանակ մի քանի խնդիր՝ հավասարակշռել առաջարկ-պահանջարկը, կանխել գների անկումը, լրացնել պետական պահուստները:

3. Ուղղակի վճարումների ծրագիր: Փոքր ֆերմերային տնտեսությունները սուբսիդավորվում են արտադրության միջոցների ձեռքբերման, հողի մշակության համար (A.A. Ковбасюк, 2016):

Այսպիսով՝ ԱՄՆ-ում գյուղատնտեսական քաղաքականությունը հիմնականում ուղղված է՝

- ֆերմերների եկամուտների աջակցմանը,
- գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացմանը,

- համաշխարհային շուկայում ամերիկյան ապրանքների բարձր մրցունակությանն աջակցմանը:

Թվարկված նպատակների հիման վրա որոշվում են ամերիկյան քաղաքականության ինդիկատորները:

- հացահատիկի արտադրության և իրացման կարգավորում երկրում,

- գյուղական ենթակառուցվածքների (ճանապարհաշինություն, մեկտրոսցում, էլեկտրիֆիկացում և այլն) ստեղծում,

- գիտահետազոտական և փորձագիտական աշխատանքների զարգացում ու ներդրում գյուղատնտեսությունում:

Կանադայում գործող հացահատիկի կոմիտեն սահմանում է երաշխավորված գին, որով պետությունը պարտավորվում է ֆերմերներից գնել սահմանված չափաքանակով հացահատիկ: Հացահատիկի կոմիտեի միջոցների դեֆիցիտը լրացվում է դաշնային բյուջեի հաշվին: Հացահատիկի արտադրությունն արդյունավետ կարգավորում է մատակարարումների չափաքանակների բաշխումը, որը հնարավորություն է տալիս արտադրության մակարդակի և կառուցվածքի վրա ազդել, ֆերմերային եկամուտներն ապահովել առանց բյուջետային միջոցների օգտագործման ու ֆինանսական ռիսկերի:


Չինաստանում կիրառվում է երկմակարդակ գնային համակարգ՝ պետության կողմից ամրագրված և ազատականացված գներ: Հացահատիկի գինը շուկայում որոշվում է առաջարկ-պահանջարկի հիման վրա, միևնույն ժամանակ վերահսկվում է պետության կողմից՝ վաճառքի նվազագույն գնի ապահովման նպատակով: Առաջարկ-պահանջարկի հավասարակշռության ապահովումն իրականացվում է ինտերվենցիոն միջոցառումների և ապահովագրական պահուստների ձևավորման միջոցով:

Ճապոնիայում հացահատիկի շուկայի կարգավորման նպատակով կիրառվում են պետական գնումներ և ապրանքային ինտերվենցիա (ՀՀ-ում գյուղատնտեսության սուբսիդավորման հայեցակարգ, 2016):

Եվրամիության երկրներում գործում է գնային աջակցության կառուցակարգը. սահմանվում են նպատակային, համեմատաբար բարձր մակարդակի գներ, որոնք միջին և մեծ արտադրողականությամբ ֆերմերային տնտեսությունների համար ապահովում են եկամտի որոշակի մակարդակ: Հացահատիկի նվազագույն գինն ապահովվում է պետական գնումների միջոցով: Պետական գնող կազմակերպությունները նախապես սահմանված գներով գնում են հացահատիկը՝ կանխելով սահմանված նվազագույնից շուկայական գների իջեցումը (H.M. Полянская и др., 2020, T.M. Полушкина, 2020):

Լեհաստանում ցորենի և տարեկանի համար սահմանվում են երաշխավորված գներ ու արտահանման-ներմուծման արդյունավետ կառուցակարգ: Գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության նախարարությանը կից գործում է Ագրարային շուկայի գործակալություն, որը շուկայական գների սահմանված նվազագույնից ցածր գների դեպքում իրականացնում է ինտերվենցիոն գնումներ: Բացի այդ՝ գործակալությունը ցորեն է գնում նաև պետական պահուստի համար:

Բացի պետական աջակցության վերոնշյալ մեթոդներից՝ գյուղատնտեսությունում հիմնական կապիտալի վերարտադրության համար կարևորվում է լիզինգը: ԱՄՆ-ում լիզինգի միջոցով ֆինանսավորվում է կապիտալ ներդրումների 20-30, Անգլիայում՝ 11-20, Ֆրանսիայում՝ 16-17, Գերմանիայում՝ 15-16, Իտալիայում՝ 14-15, Կանադայում՝ 8-10 %-ը:



ՊՁ. 2. ՀՀ հացահատիկի արտադրության ոլորտի պետական կարգավորման առաջարկվող մոդելը (կազմվել է հեղինակների կողմից):

Հացահատիկի արտադրության ոլորտի պետական կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությամբ միանգամայն ակնհայտ է, որ ներդրումների ակտիվացման գործում պետությունը պետք է հանդես գա ոչ թե որպես գլխավոր ներդրող, այլ ստեղծի ոլորտի զարգացմանը խթանող միջավայր: Նշված համատեքստում չափազանց կարևոր է պետություն-մասնավոր հատված գործընկերային համագործակցության ապահովման գործուն կառուցակարգերի ներդրումը (www.fao.org):

Կատարված վերլուծությունների և հետազոտությունների հիման վրա մեր կողմից մշակվել է ՀՀ հացահատիկի արտադրության պետական կարգավորման մոդել (գծ. 2):

Առաջարկվող մոդելում կարևորում ենք հացահատիկի հանձնախմբի ստեղծումը, որի հիմնական գործառնությունները պետք է լինեն գյուղատնտեսության նախարարության (առաջարկում ենք վերականգնել) կողմից ռազմավարական նշանակություն ունեցող արտադրանքի (մասնավորապես՝ հացահատիկի) արտադրության և բաշխման սահմանված չափաբանակների հիման վրա գյուղացիական տնտեսությունների հետ պայմանագրերի կնքումը, գործընթացի վերահսկողությունը և կատարողականի ամփոփումը:

Եզրակացություն

Ամփոփելով հացահատիկի արտադրության ոլորտի պետական կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրության, ոլորտի փորձագետների, փորձառու ֆերմերների և պետական աջակցության ծրագրերից օգտվողների կարծիքները, ինչպես նաև գնահատելով ՀՀ-ում հացահատիկի արտադրության զարգացմանն ուղղված պետական աջակցության արդյունքները՝ կարևորում ենք հետևյալ միջոցառումների իրականացումը:

1. Ստեղծել հացահատիկի հանձնախումբ: Գյուղատնտեսության զարգացման և պարենային անվտանգության ապահովման արդի մարտահրավերների տեսանկյունից Գյուղատնտեսության նախարարության վերականգնումը հրատապ է: Դրան կից պետք է ստեղծել հացահատիկի հանձնախումբ, որը կվերահսկի և կկազմակերպի հացահատիկի արտադրությունն ու իրացումը:

2. Ձևավորել երաշխավորված (գրավային գների) ինստիտուտ: Տեղեկատվական համակարգի միջոցով հանձնախումբը, վերլուծելով վերջին տարիների հացահատիկի շուկայի վիճակը, աշխարհաբաղաբանական իրադարձությունները, գների տատանումները և սպասվելիք արդյունքները, պետք է սահմանի երաշխավորված գներ: Հանձնախմբի գործունեությունը, ըստ գյուղատնտեսական տարբեր գոտիների և համայնքների, պետք է լինի ճկուն ու համակարգված: Մասնավորապես, գտնում ենք, որ ելնելով մշակվող հացահատիկի կոնկրետ սորտից, բերքատվության մակարդակից, ստացվող արտադրանքի որակից և տարածաշրջանից նպատակահարմար է կիրառել տարբերակված մոտեցումներ և կառուցակարգեր:

3. Սահմանել հացահատիկի արտադրության և բաշխման չափաբանակներ (բվտաներ), ամրապնդել պայմանագրային հարաբերությունները: Հաշվի առնելով երկրի ռեսուրսային հնարավորությունները և պարենային անվտանգության շեմը՝ գյուղատնտեսության նախարարությունը պետք է սահմանի արտադրության ու բաշխման չափաբանակները: Վերջիններիս վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է տրամադրել հացահատիկի մշակությամբ մասնագիտացված համայնքներին, առանձին տնտեսավարողների հետ կնքել պայմանագրեր:

4. Կիրառել ապրանքային ինտերվենցիա: Պետական աջակցության ծրագրերի մշակման համատեքստում կարևոր ենք համարում ապրանքային ինտերվենցիայի կիրառումը, որի նշանակությունը ոչ միայն պետական պահուստային ֆոնդի ստեղծումն է, այլև արտադրության նվազագույն եկամտաբերության և տնտեսավարողների կայուն եկամուտների երաշխավորումը:

5. Տնտեսություն-ենթակառուցվածք փոխգործակցության խթանում: Հացահատիկի արտադրության ամբողջ շղթայի զարգացումը, կայունացումը, արդիականացումը և արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է խթանել տնտեսություն-ենթակառուցվածք փոխգործակցությունը: Այդ նպատակով առաջարկվում է սուբսիդավորել այն տնտեսություններին, որոնք կհամագործակցեն գյուղատնտեսական տարբեր ծառայություններ մատուցող տեղական կազմակերպությունների հետ: Օրինակ՝ այն տնտեսավարողները, որոնք կգբաղվեն բացառապես գիտական կենտրոնների կողմից առաջարկվող, հավաստագրված հացահատիկային մշակաբույսերի սորտերի կամ հիբրիդների մշակությամբ և ստացված բերքի իրացմամբ: Անհրաժեշտ է խստացնել նաև սուբսիդավորման պայմանները, մասնավորապես, եթե չի ապահովվում արտադրության չափաբանակը, չի ստացվում նախատեսված արդյունքը և խախտվել են հացահատիկի մշակության պայմանները, պետք է նվազեցվի տրամադրվող սուբսիդիան: Նման մոտեցումը տնտեսավարողներին կմոտիվացնի, որպեսզի ամեն գնով ստանան պայմանագրով ամրագրված ծավալի ու որակի հացահատիկ:

Վերոհիշյալ միջոցառումների հիման վրա մշակվել է հացահատիկային ենթահամալիրի պետական կարգավորման մոդել և կազմվել է գործիքակազմ: Նշվել են յուրաքանչյուր ստորաբաժանման գործառնությունները: Տեղեկատվական բաժինը, վերլուծելով հացահատիկի շուկայի վիճակը և գների տատանումներն ու միտումները, երաշխավորված գին կսահմանի ըստ գյուղատնտեսական գոտիների, համայնքների, մշակվող սորտերի: Դա հնարավորություն կտա, հաշվի առնելով համայնքների բնատնտեսական ռեսուրսային ներուժը, ապահովել հացահատիկի արտադրության բարձր արդյունավետություն, կնպաստի հացահատիկային տնտեսությունների մասնագիտացման խորացմանը, կապահովի հացահատիկի արտադրության զարգացմանն ուղղված

արդյունավետ պետական քաղաքականության բարձր արդյունավետություն և ֆինանսական միջոցների ներդրման բարձր հատույց:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հողօգտագործման մակարդակը 2021 թ. դրությամբ կազմել է 51,2 %, ընդ որում, ըստ հացահատիկ մշակող հիմնական մարզերի, այս ցուցանիշը Արագածոտնի մարզում կազմել է 38,8 %, Գեղարքունիքի մարզում՝ 40,5, Կոտայքի մարզում՝ 31,4, Շիրակի մարզում՝ 55,0, Սյունիքի մարզում՝ 38,2, Լոռու մարզում՝ 39 %: Նշված մարզերի ընդհանուր ցանքատարածությունների շուրջ 70-85 %-ը զբաղեցնում են հացահատիկային մշակաբույսերի ցանքերը: Այսինքն՝ մոտավոր հաշվարկներով, եթե այդ մարզերում չօգտագործվող հողատարածքների առնվազն 60 %-ը (120.0 հազ. հա) հատկացվի հացահատիկի մշակությանը, ապա 25-30 ց/հա միջին բերքատվության պայմաններում կապահովվի 300.0-360.0 հազ. տ հացահատիկ, ինչը հնարավորություն կտա ինքնաբավության մակարդակը հասցնել մինչև 65-69 %:

Հեռանկարում այս ցուցանիշները կարող են ավելի բարելավվել, եթե ոլորտի պետական կարգավորման՝ մեր նախանշած դրույթները Կառավարության կողմից հաջողությամբ իրագործվեն: Ընդ որում՝ գների սահմանումը նպատակահարմար է կապակցել բերքատվության մակարդակի և արտադրանքի որակի հետ, ինչը կխթանի տնտեսավարողին ամեն գնով ստանալ բարձրորակ ու մեծաքանակ բերք: Բացի այդ՝ շրջանառության մեջ կորվեն նաև չօգտագործվող հողերը, կպահպանվեն մշակության տեխնոլոգիական գործընթացներն ու ագրոկանոնները:

Կարծում ենք՝ նշված հիմնարար միջոցառումները կնպաստեն հացահատիկի արտադրության հեռանկարային զարգացմանը, միջնաժամկետում կապահովեն իրատեսական արդյունքներ, կամրապնդեն պետություն-տնտեսություն-գիտություն համագործակցությունը, կբարձրացնեն հացահատիկի ինքնաբավության մակարդակը և, ամենակարևորը, կլուծեն ՀՀ պարենային անվտանգության խնդիրը:

Գրականություն

1. ՀՀ-ում գյուղատնտեսության սուբսիդավորման հայեցակարգ, ՀՀ կառավարության 01.12.2016 թ. N 48 որոշում, էջ 20:
2. Տեղեկանք ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ, տրված 30.11.2022 թ. <https://mineconomy.am/page/1248>.
3. https://www.armstat.am/file/article/sv_12_20a_122.pdf. ՀՀ վիճակագրական կոմիտե: Գյուղատնտեսության համախառն արտադրանք (դիտվել է՝ 17.01.2023 թ.):
4. <https://www.armstat.am/am/?nid=81>. ՀՀ վիճակագրական կոմիտե: Պարենային աղբատություն և ապահովվածություն (դիտվել է՝ 17.01.2023 թ.):

5. <https://mineconomy.am/page/1338>. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն: Գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրեր (դիտվել է՝ 24.11.2022 թ.):
6. https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/. ՀՀ ֆինանսների նախարարություն: Պետական բյուջեի հաշվետվություն 2017-2021 թթ. (դիտվել է՝ 17.01.2023 թ.):
7. Ковбасюк А.А. Зарубежный опыт государственной поддержки производства зерновых культур // Управление социально-экономическим развитием территорий. - 2016. - С. 154.
8. Колесняк И.А. Государственное регулирование сельского хозяйства за рубежом // Вестник Красноярского государственного аграрного университета. - КГАУ. - 2012. - N 6. - С. 306-309. <https://cyberleninka.ru/article/n/gosudarstvennoe-regulirovanie-selskogo-hozyaystva-za-rubezhom/viewer>.
9. Кучин С.А. Мировой опыт финансовой поддержки аграрного сектора экономики и возможность его адаптации в России // Управление экономическими системами: электронный научный журнал. - 2012. <https://cyberleninka.ru/article/n/mirovoy-opyt-finansovoy-podderzhki-agrarnogo-sektora-ekonomiki-i-vozmozhnost-ego-adaptatsii-v-rossii>.
10. Нещадин А. Опыт государственного регулирования и поддержки сельского хозяйства за рубежом // Общество и экономика. - 2008. <http://viperson.ru/articles/andrey-neschadin-opyt-gosudarstvennogo-regulirovaniya-i-podderzhki-selskogo-hozyaystva-za-rubezhom>.
11. Полушкина Т.М. Эффективность государственного регулирования сельского хозяйства // Фундаментальные исследования. - 2020. - N 6. - С. 110. <https://fundamental-research.ru/ru/article/view?id=42786>.
12. Полянская Н.М. и др. Государственная финансовая поддержка развития агропродовольственного сектора: опыт ведущих зарубежных стран / Н.М. Полянская, А.А. Колесняк, И.А. Колесняк // Экономические отношения. - 2020. - N 3. - С. 860. <https://doi.org/10.18334/eo.10.3.110746>.
13. <https://www.fao.org/3/cc0639ru/online/cc0639ru.html>. Положение дел в области продовольственной безопасности и питания в мире 2022. Переориентация политики в области продовольствия и сельского хозяйства в интересах повышения экономической доступности здорового питания (դիտվել է՝ 24.11.2022 թ.):
14. <http://www.sbs-consulting.ru/media/20091221%20%20%20.pdf>. Доклад о состоянии и перспективах увеличения производства зерновых культур в России в 2008-2009 годах (դիտվել է՝ 24.11.2022 թ.):

Пути государственного регулирования зернового производства в контексте обеспечения продовольственной безопасности РА

В.С. Алексанян, А.Г. Матинян

Национальный аграрный университет Армении

С.Н. Широков, И.Р. Трушкина

Санкт-Петербургский государственный аграрный университет

Ключевые слова: *производство зерна, государственное регулирование, международный опыт, субсидия, продовольственная безопасность*

Аннотация. Изучение международного опыта государственного регулирования сельскохозяйственного производства в настоящее время имеет важное значение для продовольственной безопасности Армении, в частности для стабилизации, расширения и дальнейшего повышения уровня самообеспеченности зернового производства.

В результате анализа эффективности и целесообразности программ финансовой поддержки Правительства РА 2010-2021 гг., направленных на улучшение производства зерна, предлагаем пересмотреть инструменты государственного регулирования, отдавая приоритет ценовой поддержке и товарной интервенции.

State Regulation Ways for Grain Production in the Context of Ensuring RA Food Security

V.S. Aleksanyan, A.G. Matinyan

Armenian National Agrarian University

S.N. Shirokov, I.R. Trushkina

Saint-Petersburg State Agrarian University

Keywords: *grain production, state regulation, state support, international practice, subsidy, food security*

Abstract. Food security of the population is one of the main challenges of the 21st century, which, due to the events of recent years (Artsakh war, pandemic, Russian-Ukrainian conflict, sanctions, export restrictions) and their consequences, has become more acute. The stability of the grain sector in the country is of particular importance from the point of view of improving the food security in Armenia. Based on the study of international practice of state support for agricultural production, the results of analysis on the effectiveness of the state support tools traditionally used in different countries, as well as evaluating the state support for the development of grain production in RA, we have developed a model of state regulation of grain production, where the application of a number of realistic methods and measures is emphasized.

The results of the studies document that, despite the government's efforts to expand grain production, the grain sown areas are decreasing year by year, yield growth is not ensured, and the total growth is decreasing. Studying the international experience of state support for agricultural production, analyzing the results of the effectiveness of the state support tools traditionally used in different countries, as well as evaluating the state support for the development of grain production in RA for 2010-2021, we propose to revise the state regulation tools.

In particular, to create a grain commission, form a guarantee and collateral price institute, set grain production and distribution quantities, strengthen contractual relations, form a commodity credit company and a grain price stabilization fund, apply commodity intervention, as well as promote economy-infrastructure intervention.

We believe that the mentioned fundamental measures will contribute to the prospective development of grain production, ensure realistic results in the medium term, strengthen the cooperation between the state, production and science, as well as increase the self-sufficiency level of grain and, most importantly, will contribute to ensuring the food security of the Republic of Armenia.

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 20RF-054 գիտական ծրագրի շրջանակում:

Ընդունվել է՝ 28.11.2022 թ.
Գրախոսվել է՝ 31.01.2023 թ.



ԱՂՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
AGRICULTURE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքը՝ anau.am/scientific-journal

doi: [10.52276/25792822-2023.1-24](https://doi.org/10.52276/25792822-2023.1-24)

ՔՏԴ 633.1:631.523

ՀԱՅԱՉԳԻՆԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅԻՆ ՄԱՐԿԵՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Մ.Վ. Բաղայան *գ.գ.թ.*, Ա.Շ. Մելիքյան *գ.գ.դ.*, Տ.Բ. Ալոյան, Ա.Զ. Սահակյան *գ.գ.թ.*

ՀԱԱՀ Ագրոէկոնոմիկոլոգիայի գիտական կենտրոն

badalyan.manvel@mail.ru, a_melikyan@yahoo.com, tatevaloyan22@gmail.com, sahakyan48@mail.ru

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բանալի բառեր՝

*հացազգիներ,
մարկեր,
գենոմ,
քրոմոսոմ,
գենետիկական բանաձև*

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հացազգիների գույքագրված նմուշների գենետիկական բազմազանության ուսումնասիրության և անձնագրավորման նպատակով գլխադինի (Gid) էլեկտրաֆորեզային սպեկտրից վերծանվել են սպիտակուցային բանաձևերը, որոշվել են ալելոֆոնները և գենոտիպերը, հոմոզիգոտության ու հետերոզիգոտության աստիճանը, ինչպես նաև կատարվել է գենոմային վերլուծություն:

Հետազոտությունների արդյունքները, որպես գենետիկական մարկերներ, կարող են կիրառվել ուսումնասիրված սորտերի և վայրի տեսակների նույնականացման ու ընտրասերման աշխատանքներում:

Նախաբան

Հայաստանի բնակլիմայական պայմանների բազմազանությունը նպաստել է մշակաբույսերի տեղական սորտ-պոպուլյացիաների և դրանց վայրի ազգակիցների հարուստ գենոֆոնդի առաջացմանը, որոնք սելեկցիայի համար ելանյութի անսպառ աղբյուր են: Հարկ է նշել, որ Հայաստանում աճող մշակաբույսերի բազմազանությունը դեռևս լիովին ուսումնասիրված չէ, բացահայտված չէ դրանց գենետիկական պոտենցիալը: Նշված ինդիքն առանձնակի կարևորություն է ստացել վերջին մի քանի տասնամյակներում, քանի որ բուսական գենբանկի ռեսուրսների բազմազանությանը սպառնացող վտանգով պայմանավորված՝ բարձրացել են գենետիկական ռեսուրսների դերը և արժեքը որպես սելեկցիոն ծրագրերի հիմք: Այդ տեսանկյունից կարևորվում են հատկապես դրանց գենոտիպային գնահատումը, արժեքավոր գենոտիպերի ընտրությունը և հետագայում սելեկցիոն նպատակով որ-

պես դոնոր օգտագործելու համար պահպանումը (С.З. Гучетль и др., 2015, С.В. Егоров, Н.А. Дуктова, 2015):

Հատկանշական է, որ տեսակի կամ սորտի շրջանակներում յուրաքանչյուր պոպուլյացիա ունի իրեն բնորոշ ալելոֆոնը և գենոֆոնդ, որոնցով տարբերվում է մյուս պոպուլյացիաներից:

Սելեկցիոն նյութի գնահատման նպատակով ներկայումս լայնորեն կիրառվում են գենետիկական մարկերներ: Սպիտակուցները, որպես գենոմային ԴՆԹ-ի լոկուսների կոդավորման արդյունք, իրենց մարկերային հնարավորություններով ոչ միայն չեն զիջում, այլև մյուս տեսակի մարկերների համեմատությամբ ունեն մի շարք առավելություններ (В.Г. Кошарев, 2007): Նման դեպքում լոկուսների նույնականացումն իրականացվում է պոլիմորֆ սպիտակուցների միջոցով, որոնք հայտնի են որպես սպիտակուցային կամ մոլեկուլային-գենետիկական մարկերներ: Պոլիմորֆ սպիտակուցները որպես գենետիկական

մարկերներ օգտագործելու հիմքում ընկած է գեների բազմակի ակտիվացումը (H.B. Кононенко и др., 2019): Վերջինս, համադրելով դասական սելեկցիայի ցանկացած մեթոդի հետ, կարելի է կիրառել ընտրասերման հետևյալ գործընթացներում:

Ելակետային նյութի գնահատում. ֆիլոգենետիկական անալիզ, գենոմի նույնականացում, պոլիպլոիդ տեսակների գենոմի կառուցվածքի գնահատում, բիոտիպերի արժեքավոր գծերի նույնականացում:

Սելեկցիա. արժեքավոր գենոտիպերի ընտրության, հիբրիդային պոպուլյացիաների վերլուծության, նոր սորտերի ստեղծման նպատակով ցանկալի գենետիկական համակարգերի վերահսկում, բազմազծային սորտ-պոպուլյացիաների և սինթետիկ սորտերի ստեղծում:

Սորտափորձարկում. սորտերի ծագման և ինքնատիպության որոշում, գենետիկական միատարրության ու կայունության գնահատում, խաչասերվող և ինքնափոշոտվող տեսակների, սորտ-պոպուլյացիաների կենսատիպային կազմի գնահատում, շրջանառվող սորտերի գրանցում ու փաստաթղթավորում:

Սերմնաբուծություն. ելակետային ձևերի տիպիկության ստուգում, ինքնափոշոտման և գենետիկական աղտոտվածության որոշում, խաչասերվող բույսերի պոպուլյացիաների կազմի վերահսկում, հիբրիդային սերմնաբուծության մակարդակի գնահատում, խաչածաղկավոր և բակլագգի բույսերի մորֆոլոգիական հատկանիշներով միմյանցից չտարբերվող սերմերի տարանջատում:

Գենային ինժեներիա. մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենոմում օգտակար տնտեսական ու կենսաբանական հատկանիշների լոկուսների կամ գենետիկական համակարգերի բացահայտում (B.Г. Кошарев, 2007):

Հացազգիների սաղմում պարունակվող գլիադինի (Gld) լոկուսի ուսումնասիրությունը առավել կիստակեցնի ուսումնասիրվող սորտերի և վայրի տեսակների ակտիվությունից ու գենոտիպերի, հոմոլոգոտության և հետերոլոգոտության աստիճանի, գենետիկական նմանության, գենետիկական բանաձևի ու գենոմային վերլուծության գործընթացը:

Նյութը և մեթոդները

Հետազոտությունները կատարվել են 2021-2022 թթ. ՀԱԱՀ Սևնդամթերքի որակի հսկման ուսումնական լաբորատորիայում: Ուսումնասիրվող բույսերի նմուշները վերցվել են ՀԱԱՀ «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի Գյուղատնտեսական մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների ազգային գենբանկի ex situ սերմնային հավաքածուից: Նմուշների նախապատրաստումը, ըստ ուսումնասիրվող տեսակների և սորտերի, իրականացվել է առանձին-առանձին: 30-40 մգ մանրացված հատիկը նախ թրջվել է 0,1 մլ 70 %-անոց էթանոլով, ապա 20-40 րոպե ինկուբացվել 40 °C պայմաններում: Կենտրոնախուսումից հետո (10 րոպե, 3000 պտ/ր) վերստվածքային հեղուկին ավելացվել է 0,1 մլ ալյումին-լակտոզային բուֆեր (W. Bushuk, R.R. Zillman, 1978, E.V. Metakovsky et al., 1984):

Էլեկտրաֆորեզն իրականացվել է գերմանական արտադրության Biometra ֆիրմայի Multigel-Long ապարատով՝ 8 %-անոց պոլիակրիլամիդային հեղի կիրառմամբ (աղ. 1):

Էլեկտրաֆորեզի ավարտից հետո հելը 60 րոպե տևողությամբ ֆիքսվել է էթանոլ, քացախաթթու և թորած ջուր (40:10:60) պարունակող լուծույթում, որից հետո 30-60 րոպե ներկվել է Կոմասի G250 ներկով, այնուհետև երեք անգամ լվացվել բուֆերով (քացախաթթվի 10 %-անոց լուծույթ): Ֆորեգրամի փաստաթղթավորումից հետո կատարվել են համապատասխան վերլուծություններ:

Արդյունքները և վերլուծությունը


Գլիադինի սպեկտրի էլեկտրաֆորեզային տարանջատումն առաջին անգամ կատարել է Ռ.Վ. Ջոնսը (R.W. Jones, 1959): Հետագա տարիներին այդ սպիտակուցի բազմակողմանի ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ հաստատուն էլեկտրական դաշտում գլիադինը տարանջատվում է չորս գոտիների և α 1 2 3 4 5 6 7, β 1 2 3 4 5, γ 1 2 3 4 5, ω 1 2 3 4 5 6 7 8 հատվածների, ինչը դիտարկվում է որպես Ետալոնային սպեկտր (B.Г. Кошарев, 1983):

Աղյուսակ 1. Գլիադինի էլեկտրաֆորեզի անհրաժեշտ պայմանները*

Սպիտակուց	Հել, %	Հելի երկարությունը, սմ	Նմուշի տիպը	Բուֆեր		Հոսանքի լարումը, V	Էլեկտրաֆորեզի տևողությունը, ժամ
				հեղային	Էլեկտրոդային		
Gld	8	12	1:1	0,05 M տրիս HCl, pH=8,8	0,016 M ալյումին-լակտոզ, pH=8,7	280	3,0

*Կազմվել է հեղինակների կողմից:

Ուսումնասիրված հացաբույսերի գլիադինի սպիտակուցային բանաձևը վերծանելու նպատակով հետազոտությունների արդյունքները համեմատվել են գլիադինի էտալոնային սպեկտրի հետ (սկ. 1):



Սկ. 1. Հացաբույսերի ուսումնասիրվող նմուշների գլիադինի էլեկտրաֆորեզային սպեկտրը. 1-16-ը հացաբույսերի սորտերն են, որոնք ներկայացված են աղյուսակ 2-ում (կազմվել է հեղինակների կողմից):

Ուսումնասիրվող նմուշների գլիադինի սպիտակուցային բանաձևը ներկայացված է աղյուսակ 2-ում: Վերջինիս համաձայն՝ ցորենի վայրի *Triticum boeoticum* (Boiss.) տեսակն առանձնանում է ֆորեզամում գլիադինի սպեկտրի և գոտիների խիստ ընդգծված սակավությամբ՝ α 0, β 5, γ 1 2, ω 1 2 6 8:

Ըստ ցորենի *Triticum araraticum* Jakubz. տեսակի գլիադինի ֆորեզամային վերլուծության՝ α 0, β 5, γ 4 5, ω 2 4: Ակնհայտ է, որ ֆորեզամում գլիադինի սպեկտրի և գոտիների սակավությունը երկարատև ինքնափոշոտման արդյունք է, ինչն առավել բնորոշ է վայրի տեսակներին: Նշված բույսերի մոտ առկա է նաև գլիադինի սինթեզը պայմանավորող գենի բազմաձևություն:

Ցորենի *Triticum urartu* Tumbex Ghandilyan տեսակի և ուսումնասիրված մյուս հացազգիների գլիադինի ֆորեզամում ու բանաձևը խիստ տարբերվում են: Այսպես՝ էլեկտրաֆորեզային սպեկտրում առկա է ընդամենը երկու գոտի՝ α 0, β 0, γ 5, ω 3 6 8: Բացակայում են α և β գոտիները: γ գոտում առկա է մեկ, իսկ ω գոտում՝ 3 հատվածներ, որոնք, ըստ էության, կրում են ժառանգման բնույթ և, որպես բնութագրիչ, հատուկ են տվյալ տեսակին:

Ըստ ցորենի *Այլթի աղաջ* սորտի ֆորեզամի՝ գլիադինի հատվածներն են՝ α գոտում՝ 2 5 7, β գոտում՝ 1 3 4 5, γ գոտում՝ 1 2 3 4, ω գոտում՝ 1 2 3 4:

Ցորենի *Ոսկեհասկ* սորտի էլեկտրաֆորեզային սպեկտրի վերլուծության համաձայն՝ պոլիակրիլամիդային հելի վրա գլիադինը ձևավորել է α 1, β 3 5, γ 1 4 5, ω 1 2 3 4 8 հատվածները:

Ցորենի *Գյուլգյանի* սորտի գլիադինի էլեկտրաֆորեզային սպեկտրին բնորոշ է α 1, β 1 2 4, γ 1 2 4, ω 1 2 3 4 7 8 հատվածների ձևավորումը: Ակնհայտ է, որ α , մասնակիորեն նաև β և γ գոտիներն աչքի չեն ընկնում գլիադինի սպեկտրի բազմազանությամբ, իսկ ω գոտուն բնորոշ է սպեկտրի բազմազան տարանջատումը:

Աղյուսակ 2. Ուսումնասիրվող հացաբույսերի գլիադինի սպիտակուցային բանաձևը*

Հ/հ	Տեղը	Սորտը կամ տեսակը	Գլիադինի (Gid) սպիտակուցային բանաձևը			
			α	β	γ	ω
1	Ցորեն	<i>Triticum boeoticum</i> (Boiss.)	0	5	1 2	1 2 6 8
2		<i>Triticum araraticum</i> Jakubz.	0	5	4 5	2 4
3		<i>Triticum urartu</i> Tumbex Ghandilyan	0	0	5	3 6 8
4		<i>Այլթի աղաջ</i>	2 5 7	1 3 4 5	1 2 3 4	1 2 3 4
5		<i>Ոսկեհասկ</i>	1	3 5	1 4 5	1 2 3 4 8
6		<i>Գյուլգյանի</i>	1	1 2 4	1 2 4	1 2 3 4 7 8
7		<i>Գարսակֆերյան</i>	0	5	1 2 3 4	2 3 5
8		<i>Քոչիկ</i>	0	3 5	1 2 4 5	1 2 3 4 5 6
9		<i>Գալգալոս</i>	0	3 5	3 4	1 2 3 4 6 7
10	Գարի	<i>Hordeum bulbosum</i> L.	7	1 5	1 3 4 5	1 2 3 7
11		<i>H. spontaneum</i> K. Koch.	0	1 3 5	1 2 3 4 5	1 2 4 5 6
12		<i>Հայկ 1</i>	0	1 3 5	1 2 4 5	1 2 3 5 6
13		<i>Հայկ 2</i>	0	3 4 5	1 2 3 4	1 2 3 4
14		<i>Մարինա</i>	0	0	3 4 5	1 3 5
15	Այծակն	<i>Aegilops tauschii</i> Cosson.	0	4	2 3 4 5	2 3 6 7 8
16		<i>A. umbellulata</i> Zhuk.	7	4 5	1 2 4	1 2 3 4 6 7

*Կազմվել է հեղինակների կողմից:

Յորենի *Գարսսեֆերյան* սորտի գլխադիևի էլեկտրաֆորեզային սպեկտրը ներառում է միայն β 5, γ 1 2 3 4, ω 2 3 5 գոտիները: Ի դեպ, β և ω գոտիներում սպեկտրների տարանջատումը փաստում է հարաբերական կայուն և հնարավորինս քիչ փոփոխված գենոտիպի մասին:

Փափուկ ցորենի *Քոչիկ* սորտի գլխադիևի էլեկտրաֆորեզային սպեկտրում բացակայում է α գոտին: Սպիտակուցի հատվածների բաշխվածությունը մյուս գոտիներում կազմում է՝ β 3 5, γ 1 3 4 5, ω 1 2 3 4 5 6, ընդ որում՝ β և γ գոտիներում բավական ակնառու է, իսկ ω գոտում՝ զգալիորեն թույլ է արտահայտված:

Փափուկ ցորենի *Գալգալու* սորտի գլխադիևի էլեկտրաֆորեզային բանաձևի համաձայն՝ առկա են β 3 5, γ 3 4, ω 1 2 3 4 6 7 հատվածները: α գոտու բացակայությունը, β և γ գոտիներում հատվածների նվազագույն առկայությունը տեղական սորտերի կարևորագույն առանձնահատկություններից են:

Գարու *Hordeum bulbosum L.* վայրի տեսակի մոտ էլեկտրաֆորեզային սպեկտրն ունի խիստ արտահայտված և ընդգծված պատկեր՝ ներառելով բոլոր գոտիները՝ α 7, β 1 5, γ 1 3 4 5, ω 1 2 3 7: Ըստ ֆորեզամային բանաձևի՝ α և β գոտիներում առկա են համեմատաբար թեթև մոլեկուլային զանգված ունեցող հատվածներ, որոնց միգրացիայի արագության ինդեքսը, որպես բնութագրիչ, ներկայումս շատ տարածված է սորտերի բնութագրման գործընթացում:

Գարու *H. spontaneum K. Koch.* տեսակի հատիկների սաղմում պարունակվող գլխադիևը հաստատուն էլեկտրական դաշտում տարանջատվել է մի քանի հատվածների: Ըստ գլխադիևի ֆորեզամային բանաձևի՝ α գոտին բացակայում է, իսկ β, γ և ω գոտիներում կուտակումները սահմանափակ են՝ α 0, β 1 3 5, γ 1 2 3 4 5, ω 1 2 4 5 6:

Աշնանացան գարու *Հայկ 1* սորտի գլխադիևի սպեկտրի բանաձևի համաձայն՝ առկա են β 1 3 4, γ 1 2 4 5, ω 1 2 3 5 6 հատվածները: Այս դեպքում ևս α գոտին բացակայում է, իսկ մյուս գոտիներում առկա են նվազագույն հատվածներ:

Աշնանացան գարու *Հայկ 2* սորտի գլխադիևի ֆորեզամի արդյունքային տվյալները բավականին մոտ են գարու *Հայկ 1* սորտի նույնանուն տվյալներին: Ըստ բանաձևի՝ α 0, β 3 4 5, γ 1 2 3 4 5, ω 1 2 3 4: Ակնհայտ է, որ բոլոր գոտիներում նկատելի է հատվածների թույլ արտահայտվածություն և, որպես օրինաչափություն, բացակայում է երկու գոտի:

Գարու *Մարինա* սորտը, ի տարբերություն նախորդ սորտերի, գլխադիևի էլեկտրաֆորեզային սպեկտրում ունի երկու գոտի՝ α 0, β 0, γ 3 4 5, ω 2 3 5: Ակնհայտ է, որ սորտի ձևավորման ընթացքում միջսորտային խաչասերումները չափավոր են կատարվել, գերակշռում են ընտրությունը և զուգընտրությունը:

Այծակի *Aegilops tauschii Cosson.* տեսակի գլխադիևի սպեկտրի բանաձևի համաձայն՝ առկա են α 0, β 4, γ 2 3 4 5, ω 2 3 6 7 8 հատվածները: α գոտում հատվածները

բացակայում են, իսկ β գոտում առկա է միայն մեկը: Չատկանշական է, որ բոլոր գոտիներում հատվածներն ունեն ընդգրկուն դրսևորումներ:

Այծակի *A. umbellulata Zhuk.* տեսակի կենսաքիմիական-գենետիկական վերլուծությամբ ակնհայտ է, որ գլխադիևի պոլիակրիլամիդային հելի էլեկտրաֆորեզի արդյունքում ձևավորվել են բոլոր չորս գոտիները՝ α 7, β 4 5, γ 1 2 4, ω 1 2 3 4 6 7: Ֆորեզամում հատվածների ընդգրկվածությունը խիստ արտահայտիչ է:

Ըստ սպիտակուցային կամ կենսաքիմիական մարկերների՝ հացազգիների գենոտիպավորման գործընթացում կարևոր գործոն է նաև գենոմային վերլուծությունը: Չարկ է նշել, որ գլխադիևի α, β, γ, ω գոտիների տարբեր հատվածների սինթեզը պայմանավորող գեները գտնվում են տարբեր քրոմոսոմներում (6A, 6D(α), 6B(S), 1A(S), 1B(S), 1D(S)), ինչը տեսակային առանձնահատկություն է և կրում է ժառանգման բնույթ (աղ. 3):

Չացազգիների ուսումնասիրված սորտերի և վայրի տեսակների գենոմային վերլուծությունն ըստ սպիտակուցային մարկերների ամփոփված է աղյուսակ 3-ում:

Triticum boeoticum Boiss. տեսակի մոտ α գոտին բացակայում է, β գոտու 5 հատվածի սինթեզը պայմանավորող գեները գտնվում են 6B(S) և D քրոմոսոմներում, γ գոտու 1 2 հատվածներինը՝ 1A(S) և 1D(S), ω գոտու 1 2 6 8 հատվածներինը՝ 1B(S), ω 8 1D(S), ω 6 1A(S) քրոմոսոմներում (նկ. 2):

Triticum araraticum Jakubz. տեսակի մոտ α գոտին բացակայում է, β գոտու 5 հատվածի սինթեզը պայմանավորող գեները տեղակայված են 6B(S) և D քրոմոսոմներում, γ գոտու 4 5 հատվածներինը՝ 1A(S), γ 4 1B(S), ω գոտու 2 4 հատվածներինը՝ 1B(S) քրոմոսոմներում:

Triticum urartu Tumbex Ghandilyan տեսակի մոտ բացակայում են α և β գոտիները, γ գոտու 5 հատվածի սինթեզը պայմանավորող գեներն առկա են 1A(S) քրոմոսոմում, ω գոտու 3 6 8 հատվածներինը՝ ω 6 1A(S), ω 8 1D(S) քրոմոսոմներում:

Յորենի *Այթի աղաջ* սորտի մոտ α գոտու 2 5 7 հատվածների սինթեզը պայմանավորող գեները գտնվում են 6A քրոմոսոմում, 7 հատվածինը միաժամանակ գտնվում է նաև 1B քրոմոսոմում, β գոտու 1 3 4 5 հատվածներինը՝ 6B(S), γ գոտու 1 2 3 4 հատվածներինը՝ 1A(S), γ 2 3 1D(S), ω գոտու 1 2 3 4 հատվածներինը՝ 1D(S), 1A(S) քրոմոսոմներում:


Յորենի *Ոսկեհասկ* սորտի մոտ α գոտու 1 հատվածի սինթեզը պայմանավորող գեները տեղակայված են 6A քրոմոսոմում, β գոտու 3 5 հատվածներինը՝ 6B(S), B 5 D, γ գոտու 1 4 5 հատվածներինը՝ 1A(S), γ 4 1B(S), ω գոտու 1 2 3 4 8 հատվածներինը՝ 1B(S), ω 8 1D(S) քրոմոսոմներում:

Յորենի *Գյուլջանի* սորտի մոտ α գոտու 1 հատվածի սինթեզը պայմանավորող գեներն առկա են 6A քրոմոսոմում, β գոտու 1 2 4 հատվածներինը՝ 6B(S), γ գոտու 1 2 4 հատվածներինը՝ 1A(S), ω գոտու 1 2 3 4 7 8 հատվածներինը՝ 1B(S), ω 7 8 1D(S), ω 1 1A(S) քրոմոսոմներում:

Աղյուսակ 3. Յորենի վայրի տեսակների և մշակովի սորտերի գենոմային վերլուծությունն ըստ սպիտակուցային մարկերների*

Ք/հ	Սորտը կամ տեսակը	6A	6D(α)	6B(S)	1A(S)	1B(S)	1D(S)
1	<i>Triticum boeoticum</i> Boiss.			β 5 D 5 γ 2	γ 1 2 ω 6	ω 1 2 6 8	ω 8 γ 2
2	<i>Triticum araraticum</i> Jakubz.			β 5 D 5	γ 4 5	γ 4 ω 2 4	
3	<i>Triticum urartu</i> Tum. ex Gandilyan				γ 5 ω 6	ω 3 6 8	ω 8
4	Ալլթի աղաջ	α 2 5 7		β 1 3 4 5	γ 1 2 3 4 ω 1	α 7 ω 1 2 3 4	γ 2 3 4
5	Ոսկեհասկ	α 1		β 3 5 D 5	γ 1 4 5	ω 1 2 3 4 8 γ 4	ω 8
6	Գյուլգյանի	α 1		β 1 2 4	γ 1 2 4 ω 1	ω 1 2 3 4 7 8	ω 7 8
7	Գարասևֆերյան			β 5 D 5	γ 1 2 3 4 ω 2	γ 2 3 4	ω 2 3 5 γ 3
8	Քոչիկ			β 3 5 D 5	γ 1 2 3 4 ω 5 6	γ 2 3 4 ω 1 2 3 4 5 6	γ 2 3
9	Գալգալու			β 3 5 D 5	γ 3 4 ω 6 7	ω 1 2 3 4 6 7	γ 3 4 ω 7

*Կազմվել է հեղինակների կողմից:



Նկ. 2. Գլխադիկի գենետիկական կարգավորումը (B.Գ. Конарев, 1983):

Յորենի *Գարասևֆերյան* սորտի մոտ α գոտին բացակայում է, β գոտու 5 հատվածի սինթեզը պայմանավորող գեները գտնվում են 6B(S), D5 քրոմոսոմներում, γ գոտու 1 2 3 4 հատվածներինը՝ 1A(S), γ 2 3 4 1B(S), γ 3 1D(S), ω գոտու 2 3 5 հատվածներինը՝ 1D(S), ω 2 1A(S) քրոմոսոմներում:

Յորենի *Քոչիկ* սորտի մոտ α գոտին բացակայում է, β գոտու 3 5 հատվածների սինթեզը պայմանավորող գեները տեղակայված են 6B(S), B 5 D քրոմոսոմներում, γ գոտու 1 2 4 5 հատվածներինը՝ 1A(S), γ 2 3 4 1B(S), γ 2 3 1D(S), ω գոտու 1 2 3 4 5 6 հատվածներինը՝ 1B(S), ω 5 6 1A(S) քրոմոսոմներում:

Յորենի *Գալգալու* սորտի մոտ α գոտին բացակայում է, β գոտու 3 5 հատվածների սինթեզը պայմանավորող գեներն առկա են 6B(S), B 5 D քրոմոսոմներում, γ գոտու 3 4 հատվածներինը՝ 1A(S), ω գոտու 1 2 3 4 6 7 հատվածներինը՝ 1B(S), ω 7 1D(S), ω 6 7 1A (S) քրոմոսոմներում:

Եզրակացություն

Հացազգիների ուսումնասիրված սորտերի և վայրի ազգակիցների գենոմային վերլուծությունը սպիտակուցային մարկերների կիրառմամբ թույլ է տալիս եզրակացնել՝

- գլխադիկը տարանջատվում է չորս գոտիների՝ α, β, γ և ω. α գոտին համեմատաբար ավելի քիչ է հանդիպում, առկա է Յորենի *Ալլթի աղաջ*, *Ոսկեհասկ*, *Գյուլգյանի* սորտերի, զարու *Hordeum bulbosum* L. և այծակնի *A. umbellulata* Zhuk. տեսակների մոտ,

- գլիադինի α , β , γ , ω գոտիների տարբեր հատվածների սինթեզը պայմանավորող գեները, ըստ քրոմոսոմներում տեղակայվածության, պոլիմորֆ են և գտնվում են 6B(S), 1A(S), 1B(S), 1D(S) քրոմոսոմներում, իսկ *Ալթի ալաջ*, *Ոսկեհասկ* և *Գյուլգյանի* սորտերի դեպքում նաև 6A քրոմոսոմում: 6D(α) քրոմոսոմում գլիադինի հատվածների սինթեզը պայմանավորող գեներ առկա չեն:

Գրականություն

1. Гучетль С.З., Челюстникова Т.А., Антонова Т.С. Паспортизация новых линий и гибридов подсолнечника селекции ВНИИМК с помощью биохимических и молекулярных маркеров // Масличные культуры. Научно-технический бюллетень Всероссийского научно-исследовательского института масличных культур. - 2015. - Вып. 3 (163). - С. 31-37.
2. Егоров С.В., Дуктова Н.А. Оценка внутренней структуры генотипов льна масличного на основе белковых маркеров семян // Вестник Белорусской государственной сельскохозяйственной академии. - 2015. - N 4. - С. 48-53.
3. Конарев В.Г. Белки растений как генетические маркеры. - М.: Колос, 1983. - 320 с.
4. Конарев В.Г. Молекулярно-биологические исследования генофонда культурных растений в ВИРе (1967–2007 гг.). Издание 2-е дополненное (составители: Сидорова В.В., Конарев А.В.). - СПб.: ВИР, 2007. - 134 с.
5. Кононенко Н.В., Диловарова Т.А., Канавский Р.В., Лебедев С.В., Баранова Е.Н., Федорева Л.И. Оценка морфологических и биохимических параметров устойчивости различных генотипов пшеницы к хлоридному засолению // Вестник Российского университета дружбы народов. Серия: Агронимия и животноводство. - 2019. - Т. 14. - N 1. - С. 18-39. <http://doi.org/10.22363/2312-797X2019-14-1-18-39>.
6. Хлесткина Е.К. Молекулярные маркеры в генетических исследованиях и в селекции // Вавиловский журнал генетики и селекции. - 2013. - Т. 17. - N 4/2. - С. 1044-1054. <https://doi.org/10.18699/letters2020-6-13>.
7. Чесноков Ю.В. Генетические маркеры: сравнительная классификация молекулярных маркеров // Овощи России. - 2018(3). - С. 11-15. <https://doi.org/10.18619/2072-9146-2018-3-11-15>.
8. Bushuk, W., Zillman, R.R. (1978). Wheat Cultivar Identification by Gliadin Electrophoregrams. I. Apparatus, Method, and Nomenclature. ZCanad. J. Plant Sci. U. 58, - pp. 505-515. <https://doi.org/10.4141/cjps78-076>.
9. Jones, R.W., Taylor, N.W., Senti, F.R. (1959). Electrophoresis and Fractionation of Wheat Gluten. Arch. Biochem. Biophys., - v. 84, - pp. 363-376. [https://doi.org/10.1016/0003-9861\(59\)90599-5](https://doi.org/10.1016/0003-9861(59)90599-5).
10. Metakovsky, E.V., Novoselskaya, A.Ju., Kopus, M.M., Sobko, T.A., Sozinov, A.A. (1984). Blocks of Gliadin Components in Winter Wheat Detected by One-Dimensional Polyacrylamide Gel Electrophoresis./ ZTheor.Appl.Genet (TAG). - 1984. - 67, - pp. 559-568. <https://doi.org/10.1007/bf00264904>.

Изучение генетического разнообразия злаковых с применением белковых маркеров

М.В. Бадалян, А.Ш. Меликян, Т.Б. Алоян, А.Дж. Саакян

“Научный центр агробиотехнологии”, НАУА

Ключевые слова: *злаковые, маркер, геном, хромосома, генетическая формула*

Аннотация. С целью изучения генетического разнообразия и паспортизации взятых образцов злаковых были расшифрованы формулы белков по электрофоретическому спектру глиадина (Gld), определены аллелофонды и генотипы, степень гомозиготности и гетерозиготности, а также проведен анализ геномов.

Результаты исследований могут быть использованы в качестве генетических маркеров в работе по идентификации и селекции изученных сортов и дикорастущих видов.

Study of Genetic Diversity of Cereals Using Protein Markers**M.V. Badalyan, A.Sh. Melikyan, T.B. Aloyan, A.J. Sahakyan***“Agrobiotechnology Scientific Center”, ANAU***Keywords:** *cereals, marker, genome, chromosome, genetic formula*

Abstract. The crops variety growing in Armenia has not been fully explored yet, hence, their genetic potential has not been revealed. Therefore, study of gliadin (Gld) locus contained in cereals' embryo will further clarify the process of allelofunds and genotypes, homozygosity and heterozygosity, genetic similarity, genetic formula and genomic analysis of studied cultivars and wild species.

The research was carried out in 2021-2022 in the educational laboratory of Food Quality Control of the Armenian National Agrarian University. The samples of the studied plants were taken from the ex-situ seed collection of the National Genebank of Agricultural Crops and their Wild Relatives of the “Scientific Center of Agro-Biotechnology” branch of the Armenian National Agrarian University.

From the electrophoretic spectrum of gliadin (Gld) for the study and identification of the genetic diversity of the inventory samples of cereals diversity protein formulas were deciphered, allelotypes and genotypes, homozygosity and heterozygosity levels were determined, and genomic analysis was performed.

According to the genomic analysis of the studied cereals varieties and wild relatives using protein markers, gliadin is spread into four zones: α , β , γ and ω . The genes regulating the synthesis of different parts of gliadin of α , β , γ , ω zones, are polymorphic located in chromosomes 6B(S), 1A(S), 1B(S), 1D(S), and in the case of Alti aghaj, Voskehask and Gjulgian also in 6A chromosome. There are no genes regulating the synthesis of gliadin segments in chromosome 6D(α).

Research results, as genetic markers, can be used in identification and selection of studied varieties and wild species.

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-4D074 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

*Ընդունվել է՝ 28.12.2022 թ.
Գրախոսվել է՝ 16.01.2023 թ.*



ԱԳՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
 Հայաստանի ազգային ագրարային համալսարան
 AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/scientific-journal

doi: 10.52276/25792822-2023.1-31

ՀՏԴ 712.4(479.25)

ՈՒՂԱԶԻԳ ԼԱՆՂՇԱՖՏՆԵՐԻ ԿԱՆԱՋԱԿԱՏՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ա.Ա. Գրիգորյան կ.գ.թ.

ՀԱԱՀ, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ

Ա.Ա. Խալաթյան, Մ.Ա. Սահակյան, Ա.Գ. Հովսեփյան

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ

grigoryan.artsvi@mail.ru, khalatyan.artur@mail.ru, mamo-saakyan@mail.ru, aidagh223@gmail.com

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բանալի բառեր՝

ուղղաձիգ կանաչապատում, բնափայտավոր լիան, ներթաղաքային կանաչ տնկարկ, լանդշաֆտ, գեղազարդ և մշտադալար բույսեր

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Վերջին տարիներին Երևան քաղաքում գեոպլաստիկ փոփոխության ենթարկված մի շարք փողոցների և պողոտաների գեղազարդությունը բարելավելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել իրականացնել ուղղաձիգ կանաչապատում:

Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը 2022 թվականի աշնանը Մյասնիկյան պողոտայի սկզբնամասում՝ Սարալանջ տանող թունելի երկու կողմում (70 գծմ տարածքում) տնկել է բաղեղ, կամպսիս և կուսախաղող բուսատեսակներ, ինչի շնորհիվ ճանապարհամերձ տարածքներն ապագայում կվերածվեն կանաչ, տեղ-տեղ ծաղկող լանդշաֆտների:

Նախաբան

Ուղղաձիգ կանաչապատումը լանդշաֆտային դիզայնի հայտնի ոճերից է, որը, ի տարբերություն սովորական, հորիզոնական կանաչապատման, իրականացվում է բնափայտավոր (փայտացողուն) լիաններով: Կանաչապատման այս եղանակն առավել տարածված է հարավային տաք, շոգ կլիմա ունեցող քաղաքներում, որտեղ արևի կիզիչ ճառագայթները տաքացնում են շենքերի, բնակարանների պատերը և նպաստում տաք, չոր միկրոկլիմայի առաջացմանը:

Տապից պաշտպանվելու համար դեռևս մեր թվարկությունից առաջ IX դարում Ասորեստանի Բաբելոն քաղաքում, ի պատիվ Շամիրամ թագուհու, հիմնադրվել են կախովի այգիներ: Ըստ պատմիչների հիշատակումների՝ Հին Հռոմում ևս խաղողի, բաղեղի մագլցող կանաչ զանգվածները զարդարել են փողոցներն ու ծառուղիները:

Ուշագրավ է, որ ուղղաձիգ կանաչապատման շնորհիվ բնակավայրերում բարելավվում են սանիտարահիգիենիկ պայմանները, բազմաօդային բնակելի և ճարտարապետական շինությունների տարածքում ստեղծվում է գունային բազմերանգություն, միաժամանակ, բարեկարգվում և բողբոջվում են կանաչ տնկարկների անհրապույր հատվածները:

Նորանկախ Հայաստանում շրջափակման, սոցիալական խոր ճգնաժամի հետևանքով կատարվեցին մասշտաբային ծառահատումներ: Բացի այդ, ոռոգման և խնամքի բացակայությամբ պայմանավորված, շարքից դուրս եկավ կանաչ տնկարկների զգալի մասը: Երևանի փոքր կենտրոնից մինչև քաղաքի ծայրամասեր կանաչ տարածքները խիստ կրճատվեցին: Ակնկալվում է, որ ստեղծված իրավիճակը հնարավոր է կարգավորել հողային փոքր տարածքների ուղղաձիգ կանաչապատման միջոցով (B.O. Казарян и др., 1974, Լ.Վ. Հարությունյան, 1977, Ա.Ա. Գրիգորյան, 2010):

Նյութը և մեթոդները

Ներթափառային կանաչ տնկարկներում ուղղաձիգ կանաչապատման գեղազարդ, ինքնատիպ կոմպոզիցիաներ ստեղծելու համար կիրառվում են մետաղյա կամ փայտյա ամրակներ, կոնստրուկցիաներ, ցանցեր, պերգուլաներ, պատածաղիներ, ցանցավահանակներ, կամարներ, բազմապիսի հենարաններ և այլն: Խոտային և բնափայտավոր լիանները փաթաթվում են դրանց և մագլցելով բարձրանում վեր:

Ուղղաձիգ կանաչապատման միջոցով մայրաբաղաբույս կարող են լուծվել հետևյալ խնդիրները.

1. Բնակելի շենքերում նպաստավոր միկրոկլիմայական պայմանների ապահովում:
2. Ճարտարապետական կառույցների ճակատային հատվածների բուսապատում և զարդարում:
3. Ճանապարհամերձ ժայռապատերի և ժայռաբեկորների կանաչապատում:
4. Ներթափառային կանաչ տնկարկների անհրապույր հատվածների քողարկում:
5. Ճարտարապետական տարբեր տարրերի զարդարում:
6. Հողորդակցական հենասյուների և ծառերի բների բուսապատում:
7. Պողոտաներում, փողոցներում գտնվող վերնանցումների բուսապատում:
8. Ինտերիերում ուղղաձիգ կանաչապատման տարրերի կիրառում:

21-րդ դարի առաջին երկու տասնամյակներում հատկապես Երևանի կենտրոնում զգալիորեն կրճատվել են ներթափառային կանաչ տնկարկները, միաժամանակ, գեոլոգիայի փոփոխություններով պայմանավորված, առաջացել են բազմապիսի, մասնավորապես կտրտված լանդշաֆտներ, ժայռապատեր, որոնք զգալիորեն աղճատում են մայրաբաղաբի գեղազարդ տեսքն ու հմայքը (Ջ. Բալայան, 2010, Ա.Ա. Գրիգորյան, 2010):

Նմանատիպ լանդշաֆտները բարեկարգելու և կանաչապատելու համար մեր կողմից երթուղային եղանակով իրականացվել են Էկոլոգիակենսաբանական հետազոտություններ, կատարվել են համապատասխան գեոդեզիական չափագրումներ, այնուհետև որոշ հատվածների և լանդշաֆտների համար կազմվել կանաչապատման ֆիտոնախագծեր ու նախահաշիվ: Բնակավայրերում ուղղաձիգ կանաչապատման համար սովորաբար կիրառվում են բնափայտավոր լիաններ, որոշ դեպքերում՝ նաև խոտային լիաններ ու ամպելային ծաղկաբույսեր (Ա.Ա. Գրիգորյան, 2010, Օ.Շ. Зацепина, 2020, N.A. Petty, 2013, J. Louis, 2015):

Երևանում ուղղաձիգ կանաչապատում իրականացնելիս և բնափայտավոր լիաններ ընտրելիս կարևոր է հաշվի առնել դրանց գոտիական շրջանացումը, մագլցման և հենարա-

նիս ամրանալու հնարավորությունները: Ստորև ներկայացվում են մայրաբաղաբույս կլիմայավարժեցված և մեր կողմից ընտրված գեղազարդ լիանների խմբերն ըստ հենարանի ամրանալու առանձնահատկությունների.

